ԳԼՈՒԽ Ն.

Ամենայն ոք որ հանիցէ ոսկի և կամ երծաթ իւր 'ի աշխարհէն հայոց առ 'ի տարբ յաշխարհ պարտաւոր է հատուցանել տանն հայոց մի 'ի երից բաժնոյն հանելով երկուս բաժինս տարցէ ուր և ինքն կամիցի։

ԳԼՈՒԽ ՆԱ.

Ամենայն ոք 'ի որ ոք ընծայիւք եթէ գանձիւ և պատուական իրօք հաւանեցուսցէ ամուսնացեալ կանանց և խառնակեսցի ընդ նմայ, տոկոս գանձից իւրոց հատուցանիցէ զի իջցէ 'ի հպարտութենէ հարստութեան իւրոյ։

ԳԼՈՒԽ ՆԲ.

Ամենայն ննջեցեալ եթէ չիցէ նմայ ժառանգ և ազգական մինչև եօթն պորտն մերձաւոր, ստացուածքն նորայ գրեսցի ժառանգութիւն տանն աղքատաց հայոց։

ԳԼՈՒԽ ՆԳ.

Ամենայն մարդ կարող է տնկել ծառ ընդ փողոցս 'ի սահման տան իւրոյ, զամենայն զոր ինչ պտուղ և եկամուտ ելցէ 'ի ծառոյ ստանայցէ տնկողն հատուցանելով տասանորդն 'ի տունն հայոց։